Ներկայումս չեն պահպանվել։ Սալերի օգտագործման փայլուն օրինակ է Հանդիսանում Իջևանի շրջանի Կիրանց վանքի (XIV դ.) մեծ եկեղեցու Թմբուկի հարդարանքը։ Այստեղ լուսամուտների շրջապատը վերցված է հախճապակե կապտավուն սալերից կազմված խճանկարի մեջ, իսկ Թմբուկի ստորին և վերին մասերը զոտկված են քառակուսի միագույն սալերով։

Նովարդի հախճասալերի թվագրումը XIII—XIV դդ. ոչ մի կասկած չի հարուցում։ Կարևոր է որոշել այն հարցը, թե երբ են սալերը դրվել եկեղեցու վրա։ Տեղում կատարված մանրակրկիտ զննությունը ցույց տվեց, որ սալերը գմբեթի քարերի մեջ ագուցվել են ոչ թե տաճարի շինության ժամանակ՝ 1301 թ., այլ հետագայում։ Նախ, սալիկները հագցնելու համար արված փորվածքները կատարված են խիստ անփույթ։ Ամրացնող նյութը, շաղախը, տարբերվում է բուն եկեղեցու շաղախից և շատ ցածր է իր որակով։ Սալերի տակ պահպանվել են նախորդ շաղախի հետքերը, որը շատ ամուր է։ Եվ, ամենակարևոր հանգամանքը, սալերի նեռի համարակալումները չեն համապատասխանում եկեղեցու վրա ունեցած դիրքին։ Օրինակ՝ 44—47 համարներում բացակայում է 45 համարը։ Ըստ երևույթին, այդ սալիկները դրված են եղել ինչ-որ մի ուրիշ շինության վրա խիստ համարակալումով։

Արդ, ե՞րբ կարող էին սալերը ուրիշ տեղից բերվել և ագուցվել եկեղեցու քարերի մեջ։ Շատ հավանական է, որ դա կատարվել է XVIII դարում, եկեղեցու վերանորոգման ժամանակ։ Եկեղեցու հարավային սյատի (1-ին հարկ) վրա պահպանվել է մի արձանագրություն, հետևյալ բովանդակությամբ. ԵՍ ՄՈՎՍԵՍԻ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐՆ (ՍԱՐԳԻՍՆ) ԹՎ.ՌՃՂԴ (1745) ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑ։

Նովարդի հախճասալերը կարևոր են ներմուծված պարսկական խեցեղենի ուսումնասիրության համար։

Ա. ԺԱՄԿՈՉՅԱՆ, Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆ ԿԻՐՈՎԱԿԱՆԻ «ԴԻՄԱՑ» ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

«Դիմաց» թաղը գտնվում է Կիրովական քաղաքի արևելյան մասում, Տանձուտ գետի աջ ափին։ Այն տափարակ, անկանոն ձևի, դեպի քաղաքը թույլ թեքությամբ մի բարձունք է։ Այստեղ 1966 թ. Հայէլեկտրալույսի Կիրովականի մասնաճյուղի շինարարական աշխատանքների ժամանակ բացվեցին մի շարք ուշ բրոնզեդարյան դամբարաններ։

Հայտնաբերված նյութերով հատկապես ուշագրավ է № 1 դամբարանը, որի ուսումնասիրությանն է նվիրված ներկա հոդվածը։

Դամբարանը քառանկյունաձև էր, ծածկված երկու բազալտե սալաքարերով։ Նրա երեք կողմերը կազմում էին մեկական ամբողջական սալեր, իսկ արևելյան կողմը, որը հավանաբար որպես մուտք է ծառայել, շարված էր միջին մեծություն ունեցող չորս քարերով։ Դամբարանն ուղղված էր արևելքից արևմուտք, երկարությունը՝ 1,2 մ, լայնությունը՝ 0,7 մ, խորությունը՝ 0,7 մ։ Պեղման ընթացքում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ խեցեղեն և մետաղե իրեր։ Ննջեցյալի ոսկորները չափազանց վատ էին պահպանված և հնարավոր չեղավ որոշել նրա դիրքը դամբարանում։ Մարդու ոսկորների հետ գտնվեցին նաև ձիու ստորին ծնոտ և խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ։

Դամբարանում հայտնաբերվեցին բրոնզի դաշույններ, դուրգ, կոճակ, ապարանջան, օբսիդաքարե նետասլաքներ, տարբեր տեսակի ուլունքներ և խեցեղեն։

Հայտնաբերված դաշույններից մեկը մեծ է (Կիրովականի երկրագիտական թանգարան, № 441/30)։ Ունի երկարավուն, եռանկյունաձև, սուր ծայրով ավարտվող շեղբ, որի մեջքը շեշտված է ցցուն, տափակ երակով (նկ. 1, աջից)։ Շեղբի հիմքում կա բրոնզե պահունակ, գամերի համար բացված երկշարք կլոր անցքերով։ Դաշույնի փայտե կոթը մտնում էր շեղբի հետ միաձույլ լեզվակի մեջ, որը ծայրին անցք ուներ, փայտե կոթի հետ գամով ամրացվելու համար։ Դաշույնի շեղբի երկարությունը 15,5 սմ է, լայնությունը հիմքի մոտ՝ 4 սմ, լեզվակի երկարությունը՝ 3 սմ, լայնությունը՝ 1,5 սմ։ Այն ձուլվել է և ապա ամրություն տալու նպատակով ենթարկվել սառը կռման, որի հետքերն ակնառու են։ Դաշույնի հետ հայտնաբերվել է նաև նրա կոնաձև ցանցկեն գլխիկը (նկ. 1, աջից վերևում), որի անցքերն ընդելուզված են փայտով։

Գոտեկապ, շարժական ցանցկեն գլխիկով դաշույնները գիտական գրականության մեջ հայտնի են որպես սևան-զարարաղյան տիպ։ Դրանք լայն տարածում են ստացել հատկապես մ. թ. ա. X—IX դդ., հարատևելով մինչև վաղ ուրարտական շրջանը։ Կիրովականի «Դիմաց»

1 Այսուհետև՝ ԿԵԹ։



Ч4. 1



Ч4. 2

Քաղի այլ դամբարաններից նույնպիսի մի քանի դաշույններ են հայտնաբերվել[2]։

Վերոհիշյալ դաշույնի զուգահեռները հայտնի են Մակարաշենից[3], Գոլովինոյից[4], Ռեզկինլագերից[5], Ջարխեջից[6], Վարդաքարից[7], Թադաքենդից[8], մի քանի օրինակով հայտնի են Ե. Լալայանի պեղած մերձսևանյան դամբարաններից (Պետական պատմական թանգարան, № 20/92—97, № 120/15)[9], Տոլորսից[10], Լեռնային Ղարաբաղից (Արջաձոր, Գետաբեկ), Կիրովաբաղ—խանլարից, Մինգեչաուրից, Թրիալեթիից[11]։

Սակայն շեղբի կենտրոնական երկայնակի ցցուն երակով նա շատ ավելի մոտ է Նորագյուղի № 3 դամբարանում, Ռեզկին-Լագերում, Ջարխեջում, Մակարաշենի № 2 դամբարանում հայտնաբերված դաշույններին, որոնք թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ.[12]։

Դամբարանում հայտնաբերված փոքր դաշույնը տերևաձև է, տափակ, շեղբի կենտրոնում՝ նեղ, ցցուն երակով (նկ. 1, կենտրոնում, ԿԹ, № 441/29)։ Դաշույնն ունի կարճ լեզվակ անցքով, որի վրա ամրացվել է փայտե կոթաոը (դաշույնի երկարությունը՝ 14,5 սմ է, լայնությունը



Նկ. 3

շեղբի հիմքի մոտ՝ 4,7 սմ)։ Նման մի քանի դաշույններ են հայտնաբերվել Կիրովականում։ Մեկը պատահական գյուտ է (ՊՊԹ, № 1753), վերը նկարագրածից մի փոքր մեծ, մեկի փոխարեն զույգ, կենտրոնում երկայնակի ձգվող ցցուն երակներով։ Շեղբը հիմքի մոտ ավարտվում է մի փոքր նեղանալով, մի աննշան լեզվակ առաջացնելով։ Հիմքի լայն մասում և լեզվակին ունի երեք անցք, փայտե կոթը դամերով ամրացնելու համար։

Մյուս տերևաձև տափակ դաշույնը հայտնաբերվել է Կիրովականի նույն «Դիմաց» թաղամասում՝ 1935 թ. Ղաֆգարյանի կողմից պեղված դամբարաններից մեկում[13]։ Այն Հ. Մարտիրոսյանի կողմից թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակի ամենավերջով[14], որը բավականին համոզեցուցիչ է։

---

2 Տե՛ս Կիրովականի երկրագիտական թանգարանում։

3 А. А. Мартиросян, Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода IX—VIII вв. до н. э., ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 9, էջ 63, նկ. 2, 4։

4 «Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի», կազմեցին՝ Ս. Ա. Եսայան, Հ. Ա. Հովհաննիսյան, Երևան, 1969, աղ. XX_6։

5 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 197—198, նկ. 77_{11}։

6 Նույն տեղում, էջ 201։

7 Т. Хачатрян, Комплекс бронзовых предметов из селении Вардакар (Артикский район), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1967, № 3, էջ 62, նկ. 4։

8 Г. Е. Арешян, Материалы из раскопок Кармирбердского (Тазакендского) могильника в музее Грузии, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1970, № 1, էջ 245, նկ. 48—52։

9 Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 1, 5, 6, նկ. 9։

10 А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре), Армянской ССР. КСИИМК, вып. 54, М., 1954, էջ 100, նկ. $40_{1,2,3}$։

11 Մանրամասն զուգահեռները տե՛ս С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, էջ 73—76, աղ. XIII։

12 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 197, 198, նկ. 77_{11}, 201, 203։ Նույնը՝ Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода IX—VIII вв. до н. э., էջ 64, նկ. 2։ Նույնի՝ Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 2, Երևան, 1969, աղ. XXI 1, 2։

13 Կ. Ղաֆգարյան, Դամբարանների պեղումներ Կիրովականում, Արմֆանի «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 3—4, 1940, Երևան, էջ 61—62, նկ. 5։

14 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 142։

Դաշույնն իր չափերով և մանրամասներով ավելի մոտ է պատահականորեն հայտնաբերվածին, սակայն շեղբի միջին մասի երկայնքով անցնող մի փոքր բարձր, ժապավենաձև գոտիով հիշեցնում է վերը նկարագրած № 1 դամբարանի սևանյան տիպի գոտեկապ դաշույնի մեջքը։

Նկ. 4

Զևով Կիրովականի վերոհիշյալ դաշույնները բավական մոտ են Սամթավրոյում[15], Բեշտաշենի ճանապարհի մոտ՝ Սաֆար-Խարաբալի հիմնահողային № 4 ուշբրոնզեդարյան դամբարաններում հայտնաբերվածներին[16]։

Այսպիսով, «Դիմաց» թաղի № 1 դամբարանում հայտնաբերված վերոհիշյալ դաշույնը հնարավորություն է տալիս նմանատիպ դաշույնների գոյատևումը հասցնել մինչև մ. թ. ա. X դ.։

Դամբարանում հայտնաբերվել են նաև բրոնզե սկավառակաձև կոճակ (ԿԵԹ, № 441/25), նեղ բրոնզե ժապավենից ապարանջան՝ սրվող, նեղացող ծայրերով (ԿԵԹ, № 441/23) և բրոնզե գնդաձև գուրգ (ԿԵԹ, № 441/23, նկ. 1)։ Նույն «Դիմաց» թաղից նման գուրգեր հայտնաբերվել են և մ. թ. ա. XI—X[17] և IX—VIII[18] դարերով թվագրվող դամբարաններում, Մակարաշենի № 2 դամբարանում, Ստեփանավանում[19], Ջարխեջում[20], Բեշտաշենի Սաֆար-Խարաբայի № 11 դամբարանում[21]։

Դամբարանում հայտնաբերված փորված հիմքով երեք օրսիդաքարե նետասլաքները (ԿԵԹ, № 441/22), ծարիրից պատրաստված մեդալիոնները, սարդիոնից, պաստայից, ապակու մածուկից ուլունքները (ԿԵԹ, № 444/26, նկ. 17) նույնպես իրենց զուգահեռներն ունեն մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի ընկզգրի նյութական մշակույթում։

Հայտնաբերված մեծ թվով խեցեղենից (45 կավաման) իրենց ձևով և դարգանախշերով հետաքրքրական են հետևյալները.

Լայնաբերան մեծ կավամանը (ԿԵԹ, № 441/18) ժապավենաձև ծավալված շուրթերով, որի հատակը իրանի համեմատ մի փոքր ցցուն է (նկ. 2, ձախից)։ Ուռուցիկ ուսերը զարդարված են թեք և խոր ակոսիկներով (բարձրությունն է 19 սմ, բերանի տրամագիծը՝ 27 սմ, իրանի տրամագիծը՝ 33 սմ, հատակի տրամագիծը՝ 11,5 սմ)։

Կաթսայատիպ մեծ կավամանը՝ մոխրասևավուն փայլեցրած մակերեսով (նկ. 3), դեպի բերանը և դեպի հատակը մի փոքր նեղանում, սեղմվում է (ԿԵԹ, № 441/19), անվիզ է, լայնադիր պսակով, հատակը տափակ։ Ուռուցիկ ուսերին խորաքանդակ գոտիներով առաջացած դաշտում փորագրված են զգաթներով վեր ուղղված եռանկյունների խմբեր, որոնք ընդմիջվում են ուղղահայաց դասավորված ցցուն կոճակների շարքով (թվով 4—5 հատ)։ Եռանկյունների ներսը ծածկված է թեք գծերով, եղևնաշարով կամ այդ երկուսի համադրությամբ և կամ հասկաձև զարդանկարի և անկյուն կազմող գծերի համադրությամբ (բարձրությունն է 23 սմ, բերանի տրամագիծը՝ 13,5 սմ, իրանի տրամագիծը՝ 31 սմ, հատակի տրամագիծը՝ 10 սմ)։

Փորշագույն, մի փոքր դուրս ծալված շուրթերով, մեկկանթանի կճուճ (ԿԵԹ, № 441/19) վզի հիմքում գծային գոտիների մեջ ամփոփված չորս հորիզոնական ալիքաձև զիգզագներ ունի։ Նրանցից ցած խոր ակոսով փորված են հինգ կամարաձև զարդեր կամ ավելի շուտ իրար մեջ հագած անկյուններ։ Հատակը մի փոքր ուռուցիկ է։ Կանթը կլոր է, միջին մասում ցցուն կոճակ ունի, իսկ զգաթին, ինչպես և հիմքի ժապավենաձև ավարտվող տափակ պոչուկին՝ եղևնաշար զարդանախշեր (նկ. 2, աջից, կճուճի բարձրությունը 21 սմ է, բերանի տրամագիծը՝ 11 սմ,

---

15 Т. Н. Чубинишвили, Древнейшие археологические памятники Мцхета, Тбилиси, 1957, աղ. IV, XVI, № 1622, 1238, 2038, 5608, «Труды кахетской археологической экспедиции», I, Тбилиси, 1969, էջ 172, աղ. I, 11։

16 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941, էջ 323, աղ. XIV։

17 А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 143, նկ. 59։

18 А. Мартиросян, Раскопки в Кировакане, էջ 66, նկ. 5։

19 Նույն տեղում, էջ 64, 68, նկ. 6։

20 А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., էջ 201։

21 Б. Куфтин, Археологические раскопки в Триалети, էջ 333, աղ. XLIX։

իրանի տրամագիծը՝ 23 սմ, հատակի տրամագիծը՝ 10 սմ)։

Ուռուցիկ ուսերով մեծ, սև փայլեցրած թաղարի վերին մասը զարդարված է շուրթից ցած մեկ ալիքաձև և ապա բազմաշար հորիզոնական գոտիներով, որոնք գոտկատեղում եզերվում են հորիզոնական խորաքանդակ ժապավենով (նկ. 2, ներքևում, ԿԵԹ, № 441/17, բարձրությունը 18 սմ է, բերանի տրամագիծը՝ 29 սմ, իրանի տրամագիծը՝ 28,5 սմ, հատակի տրամագիծը 11,5 սմ)։

Ճիշտ նույն զարդանախշերն ունեն դամբարանում հայտնաբերված մեծ և փոքր քրեղանները (նկ. 4, ԿԵԹ, № 441/10—13), որոնցից մեկի հատակին փայլեցման եղանակով խաչվող ժապավեն է արված (ԿԵԹ, № 441/11), իսկ մեկ այլ քրեղանի ամբողջ հատակը ծակոտկեն է (նկ. 5, № 441/16)։ Այն հավանաբար քամիչի դեր է կատարել։

Ուշագրավ է ձվաձև իրանով, սև փայլեցրած, դեպի ներս նեղացող բերանով կավամանը, որի մասերն են պահպանվել (ԿԵԹ, № 441/21)։ Նրա ցցուն գոտիով եզերված, շուրթից սկիզբ առնող եռանկյունաձև ելուստի մակերևույթը կնտածածկ է։ Իրանը զարդարված է հորիզոնական խոր և լայն գոտիներով։

Դամբարանում հայտնաբերված խեցեղենն իր զուգահեռներն ունի Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. II հազարամյակի վերջի և հատկապես մ. թ. ա. I հազարամյակի սկզբի մի շարք հնավայրերում։ Առաջին հերթին նրա զուգահեռները կարելի է տեսնել Կիրովականի նույն «Դիմաց» թաղում տարբեր ժամանակներում պեղված դամբարանային նյութերում. օրինակ՝ իրար մեջ դասավորված երեք կամարների զարդանախշեր ունեն 1940 թ. «Դիմաց» թաղամասի դամբարաններից հայտնաբերված մեկկանթանի կճուճները (ՊՊԹ, № 1741/1)։

Խորաքանդակ գոտիներով առաջացած դաշտում հորիզոնական ալիքների զարդամոտիվը, որ պատկերված էր ուսումնասիրվող դամբարանի կճուճներից մեկի ուսերին (ԿԵԹ, № 441/10), այստեղ երևան է գալիս սև փայլեցրած, կարճավիզ կավամանի ուսերի վրա (ՊՊԹ, № 1741/3)։ Անկյունային ուսերով, եռանկյունաձև հարթակով կավամանի զուգահեռը նույնպես վերոհիշյալ հավաքածուում է (ՊՊԹ, № 1741/2)։

Ուսումնասիրվող դամբարանի երկթեք իրանով, բազմաշար հորիզոնական գոտիներով զարդարված քրեղանների մոտավոր զուգահեռները կան «Դիմաց» թաղում 1935 թ. պեղված դամբարանների նյութերում (ՊՊԹ, № 1236/2, 8, 9, 20, 27)[22]։

Խեցեղենի զուգահեռները կարելի է տեսնել նաև Մակարաշենի մ. թ. ա. VIII դդ. թվագրվող № 2 դամբարանում, որում հայտնաբերված պարուրազարդ գոտիով կավամանն իր ձևով և եռանկյունաձև ելուստով հար և նման է վերը



Նկ. 5

նկարագրված (ԿԵԹ, № 441/21) կավամանին։ Մեծ են նմանությունները նաև թասեր-քրեղանների միջև։ Մակարաշենի կճուճների կանթերին նույնպես բնորոշ են կոճակաձև, ցցուն զարդերը, կավամանների զարդանախշումը եղևնաշար գոտիով կամ խոր ակոսիկներով։

Զուգահեռներն ի հայտ են գալիս նաև Ռեդկին-լագերի մ. թ. ա. X—IX դդ. խեցեղենի հետ համեմատելիս[23]։

Զուգահեռները կարելի է տեսնել նաև Թազաքենդի խեցեղենի հետ համեմատելիս։ Օրինակ՝ Թազաքենդի լայնաբերան կավամանի ժապավենաձև, մի փոքր ցցուն, շեշտված շուրթը և նրանից սկսվող ելուստը, զարդարված եղևնաշարով, հիշեցնում են Կիրովականի խեցեղենը։

Թեք, խոր և լայն ակոսիկներով զարդանախշը, որն, ինչպես տեսանք, կատարված էր Կիրովականի լայնաբերան մեծ կավամանի ուսերին (նկ. 2, ձախից), արտակարգ բնորոշ է Մեծամորի միջնաբերդի մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով թվագրվող այրված, հրդեհված շերտի խեցեղենին։

Այսպիսով, Կիրովականի «Դիմաց» թաղի № 1 դամբարանի նյութերի ուսումնասիրությունն ու զուգահեռները հնարավորություն են տալիս այն թվագրել մ. թ. ա. XI—IX դդ.։

Ս. ՄԵՍՐՈՊՅԱՆ

---

22 Կ. Ղաֆադարյան, Դամբարանների պեղումներ Կիրովականում, նկ. 3։

23 А. Мартиросян, Раскопки в Кировакане...։ Նույնի՝ Армения в эпоху бронзы..., էջ 200—205։